

## ՀԱՎԵԼՎԱԾ 2.

### «ՄԱՆՎԱԾՔԻ ԵՎ ՄԱՆՎԱԾՔԱՅԻՆ ԻՐԵՐԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ «ԵՆԹԱՎԱՐՊԵՏ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՇՆՈՐՀՄԱՆ՝ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԵՎ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

«Մանվածքի և մանվածքային իրերի տեխնոլոգիա» մասնագիտության «Ենթավարպետ» որակավորման շնորհման՝ մասնագիտական գիտելիքների և կարողությունների գնահատման չափանիշներն են.

1. Համապատասխան պետական կրթական (որակավորման) չափորոշի բոլոր մոդուլների ուսումնառության արդյունքներով սահմանված մասնագիտական գիտելիքները ենթակա են անվերապահ յուրացման: Դրանց ստուգումն իրականացվում է հարց ու պատասխանի, համալիր թեստային հարցման, հաշվարկների, գործողությունների ցուցադրումների, պատճառահետևանքային կապերի բացատրությունների միջոցով: Նախընտրելի է, որպեսզի թեստը բաղկացած լինի ուսումնառության տարբեր արդյունքներին վերաբերող ընդհանուրը 20 կամ 30 հարցից: Արդյունքը համարվում է բավարար, եթե ճիշտ պատասխաններ են տրվում թեստային առաջադրանքի հարցերի առնվազն 3/4 - ին:

2. Մասնագիտական կարողությունների ստուգման համար պահանջվում է ներկայացնել մանվածքի արտադրության ենթավարպետի աշխատանքային առօրյայի նկարագիրը կամ կազմել արտադրական գործընթացի աշխատանքային ծրագիր՝ ընդգրկելով ստորև նշված գործողությունները.

- հերթափոխի ընդունում.
- բանվորների տեղաբաշխում.
- հումքի ապահովում.
- օժանդակ նյութերի ապահովում.
- բանվորների աշխատանքի վերահսկում և հրահանգավորում.
- թողարկված արտադրանքի հաշվառում և հանձնում.
- հերթափոխի հանձնում.
- ենթավարպետի հատուկ պահարանի ճիշտ տեղադրում և օգտագործում.
- հատուկ աշխատանքային գործիքների նախապատրաստում և ճիշտ օգտագործում.
- մամլակի ճիշտ օգտագործում.
- պահեստամասերի նախապատրաստում և դրանց համար նախատեսված արկղի ճիշտ օգտագործում.
- վերանորոգող բրիգադի առջև հստակ հանձնարարականների ձևակերպում.
- չափող և հսկող սարքերի ու հարմարանքների ճիշտ օգտագործում.
- արտադրական խոտանը վերացնող և կանխարգելող հարմարանքների ճիշտ տեղադրում.

- մեքենա - սարքավորումների արագ և արդյունավետ լիցքավորում.
- մեքենա - սարքավորումների ընթացիկ խնամքի ճիշտ կազմակերպում և իրականացում:

Արդյունքը համարվում է բավարար, եթե վորոնշյալ գործողություններն ամբողջությամբ կատարվել են չափորոշչով նախատեսված չափանիշներին համապատասխան՝ պահպանելով աշխատանքի անվտանգության և հիգիենայի կանոններն ու նորմերը: